

Թորոս Տարօնեցի արդէն վաղուց ուշադրութեան առարկայ եղած է մեր կարողագոյն հետախոյզ ուսումնասիրողներուն մօտ : Հ. Ղ. Ալիշան նոյն իսկ 1893-ին ՍԻՍԱԿԱՆԻ էջերուն մէջ գունատիպ կը հրատարակէր անոր գործերէն : Գարեգին Սրբա-  
զան Յովսէփեան 1911-ին դեռ երբ վարդապետ էր կը խօսէր Տարօնեցիի մասին մանաւանդ անոր գործերէն արտասպա-  
թիւններ տալով ԱՆԱՀԻՏԻ 1911 5-6 թիւերուն մէջ :

Յարդ սակայն նոյն իսկ համառօտ եւ ամփոփ կենսագրու-  
թիւն մը իսկ չէ պատրաստուած այս մեծ հայ վարպետին մա-  
սին : Հարեւանցի եւ պակասաւոր էին նախապէս տրուած տեղե-  
կութիւնները, իսկ անկէ ի վեր ոչինչ եղած է ըմբռնելի կերպով  
անոր կեանքն ու գործը մեզի ներկայացնելու :

Իր ծննդեան թուականը կը պակսի մեզի : Իրմէ վերջին ծա-  
նօթ աշխատութիւնը 1346 թուականը կը կրէ ինչպէս որ իր  
կարգին պիտի տեսնանք : Որոշ կերպով նախ իրեն կը հանդի-  
պինք 1314-ին, թէեւ Վենետիկի Մխիթարեանց թիւ 193ը գրու-  
ուած է 1284-ին «մեղապարտ գրչի Թորոսի» ձեռքով առանց յա-  
ւելուածական տուեալներու որոնցմով կարենայինք զինքը ան-  
վարան Տարօնեցիի ճանչնալու : Բարեբախտաբար Հալէպի թիւ  
110 ձեռագիր տաղարանը որ թէեւ անթուական որոշ կերպով  
գրուած եւ ծաղկուած է Թորոս Տարօնեցիէ ուր ի մէջ այլոց  
Թորոս Տարօնեցի կը յիշատազրէ «մեղապարտ գրչի Թորոսի»  
ճիշտ յար եւ նման 1284-ի յիշատակաձեւին : Ուրեմն անտարա-  
կոյս Վենետիկի թիւ 193ըն ալ Թորոս Տարօնեցիի գրչութեան  
եւ ծաղկումին արգասիքն է, միայն թէ ըստ երեւոյթի անոր հը-  
նազոյն եւ նախնական գործերէն : Այսպէս առ նուազն Թորոս  
Տարօնեցիի կունենայ 62 տարուան գործունէութիւն մը ձգուած  
1284-էն 1346 թուականներուն միջեւ : Եւ եթէ ենթադրենք որ  
ան 20 կամ 25 տարեկան էր իր առաջին կամ 1284-էն ծանօթ  
գրչութեան ատեն կրնանք ըսել որ ան ծնած էր 1260-ական թի-  
ւերուն սկիզբը եւ մեկուսի 1946 1346 թուականէն վերջ :

Իր ընտանեաց մասին իր իսկ յիշատակարաններէն կ'օգտը-  
ւինք : Ան 1332-ի յիշատակարանին մէջ կը յիշէ «զպապն իմ Սի-  
ար եւ զհայրն իմ Սարգիս քահանայ եւ զմայրն իմ Մարիամ ի-  
քաղաքէն Մշոյ» : Իսկ Հալէպի թիւ 110 ձեռագրին մէջ կը յիշէն  
միայն «զհայրն իմ Սարգիս քահանայ ի տարօնոյ եւ զմայրն իմ  
Մարիամ» եւ անմիջապէս կ'աւելցնէ «եւ զեղբայրն իմ Մարտի-